

Աստղիկ Սիմոնյան

«Պատմամշակութային արժեքոգ-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ
ast.simonyan@yahoo.com

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ. ԽԵՑԵՂԵՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

Հիմնաբառեր. Հնագիտություն, խեցեղեն, վերականգնում, ամրակայում, մաքրում, պահպանություն, վերականգնման վկայագիր:

Ներածություն

Աշխատանքի նպատակն է ներկայացնել հնագիտական առարկայի վերականգնման հիմնական փուլերը, խեցեղենի վերականգնման մեջ տարածում գտած և կիրառելի մեթոդներն ու նյութերը: Հայաստանում վերականգնումը լինելով նոր զարգացող գիտաճյուղ՝ ժամանակ է պահանջում մասնագետներից ներկայացնելու իրենց կատարած աշխատանքները, կիսվելու այժմ իրենց կողմից կիրառվող և նոր ուսումնասիրվող մեթոդներով: Ուստի հնագիտական առարկաների վրա տարվող վերականգնման աշխատանքները կարիք ունեն արձանագրվելու և ներկայացվելու գիտական հանրությանը:

Հնագիտական գտածոների վերականգնման և պահպանման հարցը հուզել է մարդկանց դեռևս անտիկ շրջանում, սակայն թափ է առել միջնադարում: Թանգարանային առարկաների վերականգնման առաջին փորձը կատարվել է դեռևս 17–18-րդ դդ.: 18-րդ դարի վերջում և 19-րդ դարի սկզբում կատարվող վերականգնման աշխատանքների տրամաբանությունը փոքր ինչ տարբերվում էր այժմյան վերականգնողների աշխատանքից: Եվրոպացի վերականգնողները փորձում էին առարկաներին տալ «պատմական» տեսք՝ հնարավորինս թաքցնելով վերականգնողի կողմից իրականացրած միջամտությունները: Գեղանկարչության մեջ, օրինակ, կիրառվում էր համալիր աշխատանքներ գեղարվեստի նմուշները ամրակայելու համար: Իսկ ինչ վերաբերում է ճարտարապետական հուշարձաններին, ապա դրանց վերականգնումն ավելի շատ ներկայացնում էր հետևյալ պատկերը. խարխուղ հատվածների քանդում և վերակառուցում (Степанова 2018, 7–8):

Վերականգնողի գործիքակազմը, աշխատանքի տրամաբանությունը և մե-

* Ստացվել է 26.03.2024, ուղարկվել է գրախոսման 05.04.2024, ընդունվել է տպագրության 01.07.2024:

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6A060 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

թողաբանությունը տարիների ընթացքում, անշուշտ, ենթարկվել են մի շարք փոփոխությունների: Գիտության և տեխնիկայի զարգացումն իրենց ազդեցությունն են թողել վերականգնողի աշխատանքի կազմակերպման տրամաբանության վրա: Սակայն վերականգնողի ամենակարևոր և առաջնային խնդիրը անփոփոխ է մնում. այն է պահպանել առարկան և «երկարացնել» նրա կյանքը, ապահովել առարկայի անվտանգությունը և փոխանցել մշակութային արժեքները սերնդեսերունդ (Սիմոնյան 2021, 152):

Տոնդերում թանգարանային առարկաների ֆիզիկական պահպանվածությունն ապահովելու համար անհրաժեշտ է իրականացնել համալիր գործողությունների շարք, որն իր մեջ ներառում է ոչ միայն համապատասխան պայմանների ապահովում, այլ նաև ճիշտ ժամանակին անհրաժեշտ միջամտությունների իրականացում (վերականգնում և ամրակայում/կոնսերվացիա):

Վերականգնումը միջոցառումների շարք է, որն ուղղված է առարկայի նախնական տեսքի վերականգնմանը: Արդյունքում վերականգնումն ու ամրակայումը բերում են առարկայի նյութի վիճակի կայունացմանը:

Ամրակայումը միջոցառումների ժամանակավոր շարք է առարկային առաջնային օգնություն ցույց տալու համար:

Ռաշտային ամրակայում: Նախքան հնագիտական առարկան լաբորատորիա տեղափոխելը և վերականգնման բուն աշխատանքների սկիզբը, երբեմն առարկան կարիք է ունենում անմիջապես դաշտում ամրակայման աշխատանքների: Այդպիսի դեպքերում վերականգնողի աշխատանքները սկսվում են պեղումների ընթացքում, որի հիմնական նպատակն է առարկայի վիճակի կայունացումը դառնալի նյութերի միջոցով և տեղափոխումը լաբորատորիա:

Կավից պատրաստված առարկաների մաքրման և ամրակայման համար կան մի քանի կանոններ, որոնք ընդհանուր են ցանկացած տիպի պահպանվածության պարագայում: Առարկան հայտնաբերումից անմիջապես հետո պետք է լվանալ, ապա դանդաղ չորացնել: Սակայն պիտի ուշադիր լինել ջնարակապատ և ներկով զարդանախշված խեցեղենին: Եթե զարդանախշն արվել է թրծումից հետո, ապա այն խոզանակով չոր մաքրման կամ ջրով լվացման պարագայում կմաքրվի, իսկ եթե նախշն արվել է թրծումից առաջ, ապա ո՛չ խոզանակով չոր մաքրումը, ո՛չ էլ լվացումը այն չեն վնասի:

Վերականգնման աշխատանքների կազմակերպման փուլերը

Վերականգնման ենթակա առարկայի վրա տարվող աշխատանքները տարբերվում են միմյանցից՝ կախված առարկայի նյութից, հայտնաբերված առարկայի միջավայրից և մի շարք այլ գործոններից: Սակայն կան համալիր աշխատանքներ, որոնք ընդհանուր են բոլոր տեսակի առարկաների համար:

Լաբորատորիա տեղափոխելուց հետո առարկան նախ և առաջ լուսանկարվում է, ֆիքսվում է առարկայի նախնական տեսքը, ապա կատարվում է առաջնային ուսումնասիրություն: Այս փուլում գնահատվում է առարկայի պահպանվածության աստիճանը, անհրաժեշտության դեպքում որոշվում է առարկայի նյութը, ըստ

այդն էլ պլանավորվում է առարկայի վրա կատարվելիք միջամտությունների մեթոդներն ու ծավալը:

Հաջորդ փուլում սկսվում են նախնական մաքրման աշխատանքները. կախված առարկայի նյութից և աղտոտվածության աստիճանից կատարվում է մեխանիկական (գործիքներով և/կամ խոզանակներով) և/կամ քիմիական մաքրում:

Եթե առարկան ամբողջանում է, ապա սկսվում են ամբողջացման աշխատանքները, իսկ եթե մաքրման աշխատանքների ավարտից հետո առարկան չի ենթարկվում ամբողջացման, ապա ըստ անհրաժեշտության կատարվում է առարկայի ամրակայում հատուկ նյութերի միջոցով: Վերջիններս թույլ են տալիս առավել խոցելի առարկաները պաշտպանել արտաքին միջավայրի քայքայիչ ազդեցություններից:

Վերականգնման աշխատանքների վերջնական փուլը համարվում է առարկայի վիճակի լուսանկարումը և հանձնումը համապատասխան հաստատություններին:

Խեցեղենի վերականգնման առանձնահատկությունները

Խեցեղենի վերականգնման աշխատանքներն ընդհանուր առմամբ կարելի է կազմակերպել հետևյալ հերթականությամբ. առարկայի մաքրում հողի, աղային, կրային և այլ տիպի կուտակումներից, բեկորների միացում, ապա հնարավորության դեպքում առարկայի ամբողջացում:

Առարկայի վրա առաջացած աղտոտվածությունը հեռացնում ենք տաք ջրով՝ խոզանակների օգնությամբ, ապա անհրաժեշտության դեպքում առարկան մաքրում ենք քիմիական լուծույթներով: Քիմիական լուծույթները, կախված առարկայի վրա գոյացած նստվածքի տեսակից, լինում են տարբեր: Կրային նստվածքի հեռացման ամենաէֆեկտիվ տարբերակներից մեկը մրջնաթթուն է (CH_2O_2), որը սուր հոտով անգույն հեղուկ է: Կախված նստվածքի հաստությունից և կարծրությունից, ինչպես նաև առարկայի որակից՝ կարելի է կիրառել մրջնաթթվի 5–20%-ոց կամ քացախաթթվի 3–5%-ոց լուծույթ (ջրային հիմքով): Ժանգի հետքերը կարելի է հեռացնել 10%-ոց կիտրոնաթթվի կամ 5%-ոց տրիկոն Բ-ի ջրային լուծույթով: Ջրածնի պերօքսիդի 10 %-ոց ջրային լուծույթը հեռացնում է թանաքի հետքերը, իսկ էթիլ սպիրտն ու ացետոնը հանդիսանում են մաքրող միջոցներ յուղերի, խեժերի և սուրգույցի համար (Андреева и др. 1999, 32):

Խեցեղենի մեխանիկական մաքրում խորհուրդ չի տրվում: Սակայն անհրաժեշտության դեպքում կարելի է օգտագործել բոլր մեքենայի ռետինե փափուկ գլխիկներ կամ սկալպել: Մաքրման աշխատանքներից հետո անհրաժեշտության դեպքում լվանում են, ապա չորացնում բնական պայմաններում՝ խուսափելով արևի անմիջական ճառագայթներից:

Համեմատաբար բարդ են ընթանում նախկինում վերականգնված առարկաների մաքրման աշխատանքները, քանզի անհրաժեշտության դեպքում սխալ սոսնձած բեկորները պիտի անջատել միմյանցից՝ խուսափելով առարկան ավելի վնասելուց: Այդ դեպքում օգտագործվում են տարբեր տիպի լուծույթներ, որոնց բաղադրությունը կախված է սոսնձի տեսակից: Օրինակ՝

- ԲՖ-2, ԲՖ-4 սուսինձը հեռացվում է էթիլ սպիրտի և ացետոնի խառնուրդով (1:1),
- Момент տեսակի սուսինձը հեռացվում է ացետոնի թրջոցով,
- ՊՎԱ սուսինձը հեռացվում է տաք ջրով (50–70°C) կամ ջրասպիրտային 50 %-ոց լուծույթով,
- ՊՎԲ սուսինձը հեռացվում է էթիլ սպիրտի թրջոցով,
- Էպոքսիդային սուսինձը՝ դիմեթիլ ֆորմամիդով:
- Առարկայի ամբողջական չորացումից հետո կատարվում է բեկորների ամբողջացում սոսնձի միջոցով: Սոսինձները լինում են տարբեր տեսակների.
- ՊՎԱ – պոլիվինիլացետատ, լուծիչը՝ ջուր,
- ՊՎԲ – պոլիվինիլբուտիրալ, լուծիչը՝ սպիրտ,
- ՊԲՄԱ – պոլիբուտիլմետակրիլատ, լուծիչը՝ կսելոլ կամ ացետոն,
- Պարալոիդ Բ-72, լուծիչը՝ ացետոն:

Խեցեղենի փխրունության դեպքում նախքան մաքրման աշխատանքները կամ աշխատանքներին զուգահեռ կատարվում է առարկայի ամրակայում՝ լուծույթների ներծծման միջոցով: Դրանք կարող են լինել ոչ միջանցիկ ճաքեր, արտաքին կամ ներքին մակերևույթների շերտազատում կամ արտաքին մակերեսի շերտի վնասվածք (Кирьянов 1960, 36): Ուստի այս դեպքերի ժամանակ կատարվում է ամրակայում (կարիք ունեցող հատվածների ներծծում) վերոնշյալ սուսինձների թույլ լուծույթի միջոցով:

Բեկորների սոսնձումից հետո չորացման գործընթացը ընթանում է բնական պայմաններում:

Առարկայի բեկորների սոսնձումից հետո բացակա հատվածները լրացնում են գիպսի միջոցով և մշակում: Կախված գիպսի չորացման արագությունից կամ կատարվում է գիպսի հնարավոր հարթեցում դեռևս թաց վիճակում, ապա՝ չոր վիճակում կամ միայն արդեն լավ չորացած վիճակում: Գիպսի հարթեցումը կատարվում է խարտոցների, մետաղական չժանգոտվող ցանցերի կամ հղկաթղթի միջոցով:

Ամբողջականացումից հետո կատարվում է գիպսի գունավորում (կախված տվյալ հաստատության նախընտրությունից կարելի է թողնել առարկան առանց գունավորման): Գունավորումը կատարելիս պիտի հաշվի առնել, որ բացակա հատվածի գույնը պիտի հնարավորինս մոտ լինի առարկայի գույնին, սակայն պիտի մի քանի երանգ տարբերվի, դրանով իսկ թանգարանի այցելուի համար հասկանալի դարձնի վերականգնված հատվածների մասշտաբները:

Գիպսի գունավորման մեկ այլ տարբերակ է արդեն իսկ պիգմենտավորված գիպսով բացակա հատվածի լրացումը, ընդ որում առարկայի գույնին հնարավորինս մոտ բնական պիգմենտի միջոցով:

Ավարտական փուլում կատարվում է առարկայի վերջնական ամրակայում Պարալոիդ Բ-72 կոչվող խեժի 3%-ոց լուծույթով (լուծիչ նյութը՝ ացետոն): Վերջինիս կիրառման արդյունքում առաջացած շերտը (թափանցիկ, քիչ փայլուն) թույլ է տալիս առարկան պաշտպանել արտաքին միջավայրի ազդեցություններից, կանխել փոշու կլանումը խեցեղենի ծակոտիների մեջ:

Վերջնական տեսքի բերումից հետո կատարվում է առարկայի լուսանկարում և հանձնում համապատասխան հաստատություններին:

Վերականգնման ընթացքի վկայագրում

Վերականգնման վերոգրյալ փուլերի կատարման ամբողջ ընթացքը զուգահեռաբար քայլ առ քայլ փաստագրվում է վերականգնող մասնագետի կողմից: Առաջին հերթին առարկան լուսանկարվում է տարբեր կողմերից, իսկ վնասված հատվածները լուսանկարվում է խոշորացված կադրով: Այա վերականգնման վկայագրի մեջ կատարվում են համապատասխան նշումներ.

- առարկայի համարները ըստ գլխավոր և բաժնի մատյանների,
- առարկայի պահպանության վայրը,
- կատարողային տեղեկություններ առարկայի մասին (հեղինակ, անվանում, նյութ, չափս, կատարման եղանակ և այլ մանրամասներ),

Այնուհետև տրվում է առարկայի վերականգնման հիմնավորում, ներկա վիճակի մանրամասն նկարագրություն: Այա քննարկումներից հետո գրի է առնվում վերականգնման միջոցառումների կազմն ու հաջորդականությունը: Ամբողջ տեղեկատվությունը լրացնելուց հետո վկայագրի մեջ գրի է առնվում առարկայի վրա տարվող աշխատանքների նկարագրությունը: Այնուհետև տրվում է կատարված աշխատանքների արդյունքի նկարագրություն և առարկայի պահպանության պայմանների երաշխավորություն:

Վերոնշյալից զատ վկայագրի մեջ գրանցվում են կատարվող գործընթացների ամսաթվերը, հանձնման և ընդունման ակտերի համարներն ու ամսաթվերը, ինչպես նաև աշխատանքն իրականացնողների ստորագրությունները:

Վկայագրի վերջում առանձնացվում է հատված վերականգնումից հետո առարկայի հսկողությունն իրականացնելուց հետո նշումներ կատարելու համար: Վկայագրի թղթային տարբերակը հանձնվում է համապատասխան ֆոնդի ֆոնդապահին, իսկ էլեկտրոնային տարբերակը պահվում է վերականգնողների մոտ:

Վկայագրի կազմումը թույլ է տալիս ծանոթանալ վերականգնողի կողմից կատարված աշխատանքներին, ինչպես նաև հետագայում, հաջորդ վերականգնողի կողմից հնարավոր միջամտությունների ժամանակ խուսափել սխալներից:

Վերականգնված առարկաների պահպանության առանձնահատկությունները

Վերականգնման աշխատանքների ավարտից հետո թանգարանային առարկան հանձնվում է համապատասխան ֆոնդեր, որտեղ իրականացվում է վերջինիս հետագա պահպանությունը: Թանգարանային առարկաների պահպանության համար գոյություն ունեն միջազգային ստանդարտներ, որոնց ապահովումը երաշխավորում է առարկայի ամբողջականությունը: Ընդհանուր առմամբ առարկան պետք է պահպանել $18 \pm 1^\circ\text{C}$ ջերմաստիճանում և $55 \pm 5\%$ հարաբերական խոնավության պայմաններում: Մի փոքր այլ է լույսի ազդեցությունը տարբեր նյութերից պատրաստված առարկաների վրա: Լուսակայունության տեսանկյունից առարկաները բաժանվում են երկու խմբի.

- մետաղ, գիպս, խեցեղեն- բարձր լուսակայունություն,
- կաշի, փայտ, կտոր, ոսկոր, թուղթ–ցածր լուսակայունություն:

Ֆունդերում առարկաների մշտադիտարկման ժամանակ ուշադրություն պետք է դարձնել նաև արդեն իսկ վերականգնված առարկաներին, քանզի վերջիններս վերականգնումից հետո «պարունակում են» նաև այլ քիմիական նյութեր, այն է՝ գիպս, սուսինձներ, թուղթ և այլն: Ուստի ի տարբերություն միայն մաքրված կամ առհասարակ չվերականգնված առարկայի, վերականգնված առարկաները որոշ ժամանակ անց (կախված վերականգնման ընթացքում օգտագործված նյութերի տեսակներից) կարիք են ունենում կրկնակի վերականգնման կամ ամրակայման:

Եզրակացություն

Հնագիտական առարկաների վերականգնումը լինելով նոր զարգացող գիտաճյուղ՝ կարիք ունի մասնագետների կողմից լուսաբանման, մանրամասնման և հանրայնացման, ինչպես նաև դրվելու գիտական շրջանառության մեջ: Առաջին հայացքից ոչ այդքան բարդ թվացող աշխատանքն իրականում հանդիսանում է բավականին ժամանակատար, նեղ մասնագիտական կարողություններ և համբերություն պահանջող գործողությունների համակարգված մի շղթա, որի կատարման ճշգրտությունից է կախված մշակութային արժեք հանդիսացող առարկաների կյանքը:

Ընդհանուր առմամբ հողվածում անդրադարձ է կատարվել հնագիտական առարկաների վերականգնման բոլոր փուլերի նկարագրությանը՝ սկսած դաշտային ամրակայումից մինչև առարկայի վերջնական վերականգնում և ամրակայում: Ներկայացվել են հնագիտական խեցեղենի վերականգնման ընթացքում օգտագործվող նյութերը, մեթոդներն ու մոտեցումները, վեր են հանվել առկա խնդիրները և դրանց լուծում հանդիսացող մեթոդների կիրառումը, ինչպես նաև տրվել է հնագիտական իրերի պահպանման անհրաժեշտ պայմանները և մանրամասն ներկայացվել է հնագիտական առարկայի վերականգնման վկայագրի կառուցվածքն ու բովանդակությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՄԻՄՈՆՅԱՆ 2021 – Միմոնյան Ա., Թանգարանային առարկաների վերականգնումը որպես մշակութային անվտանգության բաղադրիչ, «*Անվտանգության արդի հիմնասիւն-դիրները*» հանրապետական գիրաժողովի նյութեր, Երևան, Եվրոպական համալսարանի հրատ., 2021, 151–154:

АНДРЕЕВА, АНТОНЯН, БАРАБАНОВА и др. 1999 – Андреева Л., Антонян А., Барабанова Т. и др., *Реставрация музейной керамики: Методические рекомендации*, Москва, Изд.-во “ВХНРЦ им. Грабаря”, 1999.

КИРЬЯНОВ 1960 – Кирьянов А., *Реставрация археологических предметов*, Москва, Изд.-во “Академии наук СССР”, 1960.

СТЕПАНОВА 2018 – Степанова Ю., *Основы реставрации*, Тверь, Изд.-во “Тверской госуниверситет”, 2018.

Astghik Simonyan

“Service for the Protection of Historical Environment and Cultural Museum-Reservations”
SNCO, RA

ast.simonyan@yahoo.com

RESTORATION OF ARCHAEOLOGICAL ARTEFACTS: SPECIFICITIES OF CERAMIC RESTORATION

Keywords: Archaeology, ceramic, restoration, conservation, cleaning, protection, restoration passport.

The article is presenting the stages of restoration of archaeological ceramics: cleaning, conservation and subsequent restoration, as well as the specificities of the material's preservation. Reference was made to the materials and methods used in the restoration and preservation of archaeological pottery, a comprehensive study was conducted, and the variants currently accepted and applicable in the restoration of archaeological pottery were presented.

The problems arising during the restoration of archaeological pottery were outlined with their possible solutions. The preservation conditions of the pottery were cited and detailed description of the different stages of restoration was given. The content of the passport of restoration of museum artefacts was presented.

ԱՏԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ

“Служба по охране исторической среды и историко-культурных музеев-заповедников”
ГНО, РА

ast.simonyan@yahoo.com

РЕСТАВРАЦИЯ АРХЕОЛОГИЧЕСКИХ АРТЕФАКТОВ: ОСОБЕННОСТИ РЕСТАВРАЦИИ КЕРАМИКИ

Ключевые слова: археология, керамика, реставрация, консервация, чистка, защита, паспорт реставрации.

Статья посвящена этапам реставрации археологической керамики: очистке, консервации и реставрации, а также особенностям сохранности материала. Были рассмотрены материалы и методы, используемые при реставрации и консервации археологической керамики, проведено комплексное исследование и представлены варианты, принятые и применимые в настоящее время при реставрации археологической керамики.

Затронуты проблемы, возникающие при реставрации археологической керамики, и приводятся методы их решения. Представлены условия хранения керамики и дано подробное описание проделанных работ на различных этапах реставрации. Представлено содержание паспорта реставрации музейных артефактов.